

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ՝ ՏԻԱՐ ԵՐՎԱՆԴ ՀՅՈՒՍԻՍՅԱՆԻՆ Ս. ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ԱԴԱՄԱՆԴՅԱ ՇՔԱՆՇԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՑ ՑԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ԵՐՈՒԱՆԴԱՅ ՀԻՍԻՍԵԱՆ, ՀԱՐԱԶԱՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ՝ ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Հոգով ուրախ եմք, որ այսօր Լիբանանի հյուրընկալ ափերի վերա, Անթիլիասում՝ պայծառ ու կանգուն է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության պատմական Աթոռը՝ հարազատ ու հավատարիմ ծիլը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, ուր ծնունդ է առել Տանն Կիլիկիո վերջին երեք հայրապետների՝ երջանկահիշատակ Տ. Սահակ, Տ. Բաբգեն և մանավանդ Տ. Գարեգին Կաթողիկոսների շնչով և ոգով դաստիարակված շնորհալի և խոստումնալից հոգևորականների մի սերունդ, որ ազգային-կրոնական գաղափարին ջերմորեն նվիրված, իր հոգեկան ուժերը սիրով ու գիտակցորեն ի սպաս է դրել ո՛չ միայն Կիլիկիո հայրենասեր ժողովրդին, այլև՝ ի կարևոր դեպս՝ նաև Սփյուռքի մեր սիրեցյալ հոտին:

Հաճելի է Մեզ լսել նաև, որ հոգևոր անձանց կողքին կանգնած են նաև աշխարհիկ տարրեր, նույնպես նվիրված Հայ Եկեղեցուն և հայ ժողովրդին:

Տանն Կիլիկիո միաբան՝ գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոսը, որ Մեր հրավերով եկել էր Ս. Էջմիածին՝ Հոգևոր Ճեմարանի ուսանողության ասմունքաբանական դասախոսություններ կարդալու, հիացմամբ խոսեց, պարոն Երվանդ Հյուսիսյան, Ձեր մասին, նկարագրելով Ձեր կրոնասիրությունն ու հայրենասիրությունը և թվելով Ձեր կատարած բարեգործությունները: Դերենիկ սրբազանի նկարագրության հետևանքով Մեր հոգևոր տեսության առաջ պատկերացան հիշատակաց արժանի մեր նախնիքը, որոնց ստեղծագործության շնորհիվ Հայ Ազգը անուն և պատիվ է վայելել անցյալում և վայելում է այժմ, որոնց բարեգործության՝ նյութական զոհողությունների շնորհիվ՝ ամենուրեք կանգնեցին փառավոր տաճարներ՝ ճարտարապետական հրաշալի կոթողներ, հայ գիրն ու գրականությունը մատչելի դարձնող դպրոցներ և հայ մամուլ, որոնց շնորհիվ հայը պահեց իր ազգային դեմքը, ապրեց ցայսօր և կապրի այսուհետև: Անցյալում Ձեր կատարած բազմատեսակ բարի գործերը անկարող ենք անտեսել. ուստի և սույն Հայրապետական կոնդակով Մենք շնորհում ենք Ձեզ իրավունք կրելու Ձեր կրծքին Ս. Լուսավորչի առաջին կարգի ադամանդյա շքանշան՝ Ձեզ ի մխիթարություն և այլոց ի քաջալերություն:

Մաղթում ենք, որ մարդասեր Փրկիչը Իր հովանին և Աջը տարածն Ձեր և Ձեր ընտանյաց ու մերձավորաց վերա, պարգևե Ձեզ առողջություն և արևշատություն՝ շարունակելու Ձեր բարի գործը, հիշելով նաև հայրենի բնաշխարհը և Ս. Էջմիածինը:

Ո՛ղջ լերուք, շնորհօք Ս. Հոգւոյն և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ. ամէն:

ԾԱՌԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 14-ն նոյեմբերի
1953 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԲ,
յիններորդում ամի Հայրապետութեան Մերոյ,
ի վանս Սրբոյ Էջմիածնի: